րից ժառանգած սեփականութիւն էր համարում, ուր գտաւ տոհմակցին — Խոսրովին արքայական ձմեռանոցում։ Շատ որոշ է Անակի Հայաստան գալու, իր տոհմակից Խոսրովին սպաննելու նպատակը։ Թէեւ ժլատ բայց մեզ համոզիչ փաստ է տալիս Ագաթ.ը, որն ասում է՝ թէ Անակը իր ազգակցից, ինչպէս իր թշնամուց ձգտում էր վրէժ լուծել «յիւրմէ ազգէն իբրեւ ի թշնամւոյ վերայ խոստանայր վրէժ խնդրել»։ Իսկ Արտաշիրի խօսքերից աւելի պարզւում է Անակի դիտաւորութիւնը — «եթէ միայն զայդ նախանձ խնդրեսցես միամտութեամբ, զբնակութիւնն պարթեւական զձեր սեփական պահլաւն ի ձեզ դարձուցից, եւ քեզ թագ եդեալ փառաւորեցից, եւ երանելի, եւ փառաւոր ի թագաւորութեան իմում արարից եւ երկրորդ ինձ կոչեցից»։ (Ագաթ. Բ. 29. նոյն։) Խորենացին միեւնոյն բանը կրկնում է. «եթէ զբուն պատուական զձեր սեփական պահլաւն, զայն անդրէն ի ձեզ դարձուցից, եւ զքեզ թագաւ փառաւորեցից». (Խոր. գիրք Բ. գլ. կե. էջ 206 Թիֆլիս 1910.)։ Այս խօսքերից պարզ է, որ Անակը Հայաստան գնաց Խոսրովին սպաննելու որպէս զի սեփական պահլաւ կալուածքն ստանայ։ Խոսրովը իր տոհմով պիտի ջնջուէր, որպէս զի Արտաշիրը կարողանար Անակին տալ ո՛չ միայն վիճելի կալուածքը—պահլաւը, այլ եւ թագը (անշուշտ Հայաստանի) եւ իր երկրորդը հրա-